

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի  
տեսության ու պարունության ամբիոնի վարիչ,  
ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիյ. դոկտոր, պրոֆեսոր

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՉՔՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆՉԻԱՆՆԵՐԸ ԵՎ ՆԵՐՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ

Մույն հոդվածի սկիզբը նախորդ  
համարում

### III. Իրավունքի սկզբունքների ներհա- մակարգային կոնֆլիկտները

3.1. Իրավունքի սկզբունքների ներ-  
քին կոնֆլիկտները (դոկտրինալ տեսան-  
կյունը)

**(ա) Իրավունքի սկզբունքների հիե-  
րարխիան:** Իրավունքի սկզբունքների  
(դրանցից բխող նորմերի) և իրավական  
այլ նորմերի կոլիզիայի (արտահա-  
մակարգային կոլիզիա) հարցերը տե-  
սության մեջ քիչ թե շատ քննարկման  
առարկա դարձել են, սակայն իրավունքի  
սկզբունքների ներքին հիերարխիայի և  
նրանց միջև կոնֆլիկտների (ներհամա-  
կարգային մրցակցության) հարցերը հա-  
տույկ ուսումնասիրության չեն արժանա-  
ցել:

Իրավունքների սկզբունքների հա-  
մակարգումը և դրանց միջև կապերի ու-  
սումնասիրությունն իրավունքի տեսու-  
թյան մարտահրավերներից է: Ժ. Բերժելն  
արդարացիորեն նշում է. «Ընդհանուր  
սկզբունքների միջև փոխազդեցության  
նուրբ խաղն ըմբռնելու ձգտումը, ինչպես  
և սկզբունքների համակարգման ցան-  
կացած ձգտում հոլի է վտանգավոր և ան-  
կանխատեսելի շրջադարձերով»<sup>1</sup>: Աս-  
վածը, իհարկե, չի նշանակում, որ պետք  
է խուսափել իրավունքի սկզբունքների  
միջև փոխադարձ կապերի ուսումնասի-  
րությունից, պարզապես ասվածը նշա-  
նակում է, որ պետք է գիտակցել հարցի  
բարդությունը և փորձել դրան մոտենալ

համակողմանի: Ժ. Բերժելը, թեև ընդու-  
նում էր հարցի բարդությունը, այնուամե-  
նայնիվ քննարկում է իրավունքի ընդհա-  
նուր սկզբունքների հիերարխիայի որոշ  
հարցեր: Նա նշում է, որ իրավունքի ընդ-  
հանուր սկզբունքների միջև գոյություն  
ունի որոշակի հիերարխիա՝ ըստ նրանց  
նշանակության (иерархия значимости)<sup>2</sup>:

Իրավունքի սկզբունքների ներհա-  
մակարգային կոնֆլիկտների, դրանց  
իրավաբանական ուժի վերաբերյալ մո-  
տեցումները խիստ հակասական են:  
Առանձին տեսաբաններ կարծում են, որ  
իրավունքի սկզբունքներն ունեն միևնույն  
իրավաբանական ուժը, ուստի նրանք,  
ըստ իրավաբանական ուժի, չեն կարող  
կազմել հիերարխիկ համակարգ: Նրանք  
նշում են, որ ի տարբերություն, օրինակ՝  
օրենսդրության համակարգի «ուղղահա-  
յաց» (հիերարխիկ) կառուցվածքի, որը  
ձևավորվում է ակտի իրավաբանական  
ուժի չափանիշով, իրավունքի սկզբունք-  
ների համակարգում ուղղահայաց աս-  
տիճանավորումը ծագում է և կառուցվում  
է, ոչ թե սկզբունքների իրավաբանական  
ուժով (սկզբունքների ուժը նրանցից յու-  
րաբանչյուրի համար նույնն է), այլ ընդ-  
հանուրից դեպի մասնավորը կամ հակա-  
ռակը՝ մասնավորից դեպի ընդհանուրը  
անցնելու չափանիշով<sup>3</sup>: Տեսաբանների  
առավել մեծ խումբն այն կարծիքն է, որ  
իրավունքի սկզբունքների համակար-  
գում առկա է որոշակի հիերարխիա, և  
սկզբունքներն ունեն տարբեր իրավա-  
բանական ուժ: Այս խումբ հեղինակները,  
սակայն, միասնական կարծիք չունեն, թե  
ի՞նչ չափանիշով պետք է որոշել իրավուն-

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)

ՊԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



քի սկզբունքների իրավաբանական ուժը: Մի մասը սկզբունքների միջև իրավաբանական ուժի տարբերությունը կապում է սկզբունքներն ամրագրող իրավունքի աղբյուրների իրավաբանական ուժի հետ, իսկ մյուս մասը՝ սկզբունքների գործողության ոլորտի (մակարդակի) հետ: Այսպես՝ առաջին մոտեցման կողմնակիցները նշում են, որ Սահմանադրության մեջ ամրագրված հիմնարար սկզբունքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ, քան սովորական օրենքներում կամ ենթաօրենսդրական ակտերում ամրագրված սկզբունքները<sup>4</sup>: Մյուս կողմից՝ Տ. Կաշանինան նշում է որ հատուկ-իրավաբանական սկզբունքները կազմում են հիերարխիկ համակարգ, որտեղ ստորին աստիճանի սկզբունքը չպետք է հակասի ավելի բարձր աստիճանի սկզբունքին: Համաիրավական սկզբունքները վեր են կանգնած միջճյուղային և ճյուղային սկզբունքներից, և վերջիններս չպետք է հակասեն համաիրավական սկզբունքներին: Համաիրավական սկզբունքներն իրենց հերթին չպետք է հակասեն իրավական ընտանիքի կամ միջազգային իրավունքի համրաճանաչ սկզբունքներին (ընդհանուր քաղաքակրթական սկզբունքներ): Ընդհանուր քաղաքակրթական սկզբունքները բոլոր պետությունների կողմից ճանաչված և նրանց համար պարտադիր ընդհանուր բնույթի պահանջներ են, որոնք օժտված են ավելի բարձր իրավաբանական ուժով և ունեն համընդհանուր գործողության ոլորտ<sup>5</sup>: Ինչպես նկատում ենք, Տ. Կաշանինան ներկայացնում է իրավունքի սկզբունքների դասական դասակարգումը<sup>6</sup>, սակայն դրա հիմքում դնում է ոչ միայն սկզբունքների գործողության ոլորտները (մակարդակները), այլև սկզբունքների մակարդակից բխեցնում է նրանց իրավաբանական ուժը. առավել բարձր մակարդակի սկզբունքն օժտված է բարձր իրավաբանական ուժով և սկզբունքների միջև հակասության դեպքում գործում է ավելի բարձր մակարդակի սկզբունքը: Պետք է

հասկանալ, թե ի՞նչ չափանիշով է պայմանավորված ընդհանուր մակարդակում գործող սկզբունքին ավելի բարձր իրավաբանական ուժով օժտելու մոտեցումը: Չէ՞ որ այս կամ այն իրավական կարգադրագրին բարձր իրավաբանական ուժ տալը պայմանավորված է որոշակի գործոններով, օրինակ՝ այն ընդունող մարմնի կարգավիճակով (օրենսդիր մարմնի ընդունած ակտը գործադիր մարմնի ընդունած ակտի համեմատությամբ ունի ավելի բարձր իրավաբանական ուժ) կամ ընդունման ընթացակարգով (օրինակ՝ բարդացված կարգով ընդունված օրենքն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան ընդհանուր կարգով ընդունված օրենքը):

Կարծում ենք, որ իրավունքի սկզբունքների իրավաբանական ուժը, ըստ այն ամրագրող իրավունքի աղբյուրների դասակարգելը որևէ նոր բան չի տալիս: Իրավունքի սկզբունքների իրավաբանական ուժը պետք է քննարկել ոչ թե ըստ ամրագրման ձևի կամ գործողության ոլորտի (մակարդակի), այլ նրանց բովանդակային տեսանկյունից՝ կախված նրանից, թե այդ սկզբունքով ինչ սցիալական արժեք է պաշտպանվում: Բանն այն է, որ իրավունքի սկզբունքներն արտացոլում են որոշակի սցիալական արժեքներ, ուստի իրավունքի սկզբունքների կոնֆլիկտը, ըստ էության, սցիալական արժեքների մրցակցության բարդ հարցերից է:

Բովանդակային կողմից իրավունքի սկզբունքների (իրավաբանական պատասխանատվության օրինակով) առավել կուռ հիերարխիկ համակարգ է ներկայացրել Վ. Մորոկինը: Ինչպես ցանկացած տեսական դատադրություն, Վ. Մորոկինի մոտեցումը ևս ունի վիճելի կողմեր, սակայն մոտեցման հետաքրքրությունն այն է, որ հեղինակը սկզբունքների կոնֆլիկտի դեպքում նրանց նախապատվություն տալու հարցը որոշում է սկզբունքների բովանդակային կողմի հիման վրա:

**(բ) Իրավունքի սկզբունքների հիերարխիայի և դրանց կոնֆլիկտի մասին**

**Վ. Վ. Սորոկինի դոկտրինը:** Հեղինակն իրավաբանական պատասխանատվության սկզբունքների համակարգում առաձգման գծում է հիմնական և ոչ հիմնական սկզբունքներ: Հիմնական սկզբունքները երեքն են՝ օրինականության, արդարության և գթասրտության սկզբունքները: Օրինականության հիմնական սկզբունքը կոնկրետանում է իրավաբանական պատասխանատվության ոչ հիմնական սկզբունքների հետևյալ ենթախմբում՝ իրավաբանական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, անձնական պատասխանատվության սկզբունքը, միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության անթույլատրելիության սկզբունքը, իրավաբանական պատասխանատվության ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ապահովման սկզբունքը:

Արդարության հիմնական սկզբունքը կոնկրետանում է իրավաբանական պատասխանատվության ոչ հիմնական սկզբունքների հետևյալ ենթախմբում՝ անձի և պետության փոխադարձ պատասխանատվության սկզբունքը, իրավաբանական պատասխանատվության ենթարկելու նպատակահարմարության սկզբունքը, անհատականացման սկզբունքը, պատասխանատվության հիմնավորվածության սկզբունքը, ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը:

Գթասրտության հիմնական սկզբունքը կոնկրետանում է իրավաբանական պատասխանատվության ոչ հիմնական սկզբունքների հետևյալ ենթախմբում՝ հումանիզմի (մարդասիրության) սկզբունքը, իրավական վեճի կողմերի հաշտեցման սկզբունքը, ճշմարտության հաղթանակի սկզբունքը:

Նա նշում է, որ իրավաբանական պատասխանատվության հիմնական սկզբունքների միջև նույնպես գոյություն ունի սուբորդինացիա: Գթասրտությունը բարձր է արդարությունից, իսկ արդարու-

թյունը բարձր է օրինականությունից<sup>7</sup>: Վ. Սորոկինը կարծում է, որ իրավաբանական պատասխանատվության սկզբունքների միջև առաջանում է մրցակցություն, ինչը պայմանավորված է այնպիսի օբյեկտիվ պատճառով, ինչպիսին է իրավունքի սկզբունքների սուբորդինացիան: Գործնականում իրավունքի վերաբերյալ ցանկացած վեճով արդարության սկզբունքը հակասության մեջ է մտնում օրինականության սկզբունքի հետ<sup>8</sup>:

Ընդ որում՝ իրավունքի սկզբունքների միջև հակասության հարցի վերաբերյալ Վ. Սորոկինը արտահայտել է հակասական մոտեցումներ. մի դեպքում նա նշում է, որ իր կողմից թվարկված հիմնական սկզբունքների (օրինականության, արդարության և բարեգթության սկզբունքների) միջև որևէ հակասություն չկա, այստեղ առկա է հոգևոր բարոյական արժեքների խիստ հիերարխիա<sup>9</sup>, մեկ այլ դեպքում նշում է. «Իրավաբանական պատասխանատվության սկզբունքների պրակտիկ կիրառման գործընթացում նրանց միջև հակասություններն անխուսափելի է: Այս դեպքում օրինականության և արդարության միջև փոխզիջումային լուծում չպետք է լինի. որոշումը պետք է կայացնել հոգուտ արդարության: Իսկ արդարության և բարեգթության միջև հակասությունը պետք է լուծել հոգուտ բարեգթության»<sup>10</sup>:

**(գ) Սահմանադրական կարգի սկզբունքների հիերարխիան:** Իրավունքի ընդհանուր սկզբունքները (սահմանադրական արժեքները) խտացված կերպով արտացոլված են Սահմանադրության նախաբանում, սահմանադրական կարգի հիմունքներին և մարդու իրավունքներին նվիրված գլուխներում: Ըստ Գ. Գաջիևի դիպուկ արտահայտությամբ՝ հենց սահմանադրական արժեքներն են կազմում իրական սահմանադրական իրավունքը<sup>11</sup>:

Սահմանադրական արդարադատության մարմինները հաճախ հանդիպում են սահմանադրական սկզբունքների



բովանդակության վերաբերյալ գաղափարախոսական հակասությունների: Պրակտիկան ցույց է տալիս, որ սահմանադրական սկզբունքները նույնպես կարող են գտնվել ներքին կոնֆլիկտների մեջ: Գ. Գաջիևը նշում է, որ սահմանադրաիրավական սկզբունքները մեկուսացած չեն, այլ փոխկապակցված են: Ընդ որում՝ «գուգադիր» սահմանադրական սկզբունքները հաճախ միմյանց հետ մտնում են կոլիզիոն (կոնֆլիկտային՝ հեղ.) հարաբերությունների մեջ, սակայն հեղինակն ավելացնում է, որ բոլոր սահմանադրական սկզբունքները հավասարաթեք են և նրանց միջև, որպես կանոն, հիերարխիա չկա: Սահմանադրական դատարանը պետք է փնտրի դրանց հավասարակշռումը, համաձայնեցնի այդ սկզբունքները<sup>12</sup>: Գերմանացի իրավաբան Ռ. Ալեքսին նույնպես նշում է, որ սկզբունքները կարող են և պետք է հավասարակշռվեն: Սկզբունքները հավասարակշռելը (արժեքը գնահատելը) սկզբունքների իրացման տիպային ձև է<sup>13</sup>:

Սահմանադրական սկզբունքների հնարավոր կոնֆլիկտների և դրանց լուծման մասին խոսում են նաև այլ սահմանադրագետներ: Օրինակ՝ Ա. Կոկոտովը քննարկում է ժողովրդախիշխանության և մարդու իրավունքների և ազատությունների առաջնահերթության սկզբունքների բախման և դրանց ոչ հակասական համաձայնեցման մասին<sup>14</sup>: Մեկ այլ դեպքում սահմանադրական սկզբունքների հիերարխիկ համակարգում հիմնարար նշանակություն է տրվում պետական ինքնիշխանության սկզբունքին: Առանց պետական ինքնիշխանության սկզբունքի իրականացման գործնականում պետության արտաքին և ներքին քաղաքականության ոլորտներում ոչ միայն հնարավոր չէ սահմանադրական ու այլ իրավական սկզբունքների իրականացումը, այլև Ռուսաստանի գոյությունը: Այդ պատճառով պետական ինքնիշխանության և դրանից բխող պետական իշխանության միասնության սկզբունքների և համաիրավա-

կան այլ սկզբունքների (ժողովրդավարություն, մարդասիրություն, իշխանության բաժանում, նույնիսկ օրինականություն և արդարություն և այլն) միջև հնարավոր կոլիզիաները միշտ լուծվում են առավել բարձր և նշանակալից սոցիալ-քաղաքական արժեքների օգտին<sup>15</sup>:

**(դ) Եզրահանգումներ:** Պրակտիկ տեսանկյունից թերահավատորեն ենք մոտենում, երբ որևէ հեղինակ փորձում է «in abstracto» ներկայացնել իրավունքի սկզբունքների, բոլոր դեպքերի համար, ունիվերսալ հիերարխիկ համակարգ: Թերահավատությունը վերաբերում է ոչ թե իրավունքի սկզբունքների հիերարխիկ համակարգի՝ որպես տեսական մոդելի գոյության հնարավորությանը, այլ այդ տեսական մոդելի պրակտիկ գործունակությանը:

Ինչպես նշեցինք, իրավունքի սկզբունքների համակարգում ծագած կոնֆլիկտները լուծվում են ոչ թե ավանդական կոլիզիոն կանոնների կիրառմամբ, այլ, որպես կանոն, սկզբունքների հավասարակշռման մեթոդով: Եթե իրավական նորմերի կոլիզիաների դեպքում իրավաստեղծ մարմինը պետք է վերացնի իր կողմից թույլ տված օրենսդրական սխալը՝ ուժը կորցրած ճանաչելով հակասության մեջ գտնվող նորմերից մեկը (հակառակ դեպքում այդ սխալը պետք է վերացնեն իրավալիքառ մարմինները), ապա իրավունքի սկզբունքների կոնֆլիկտը հնարավոր է լուծել կոնկրետ փաստերի և հարաբերությունների շրջանակում: Մյուս կողմից սկզբունքներից որևէ մեկին կոնկրետ գործով նախապատվություն տալը չի նշանակում, որ մյուս սկզբունքն անվավեր է ճանաչվում և այլևս չի գործում: Շատ հնարավոր է, որ մի գործով նախապատվություն չունեցող սկզբունքին մեկ այլ գործով տրվի նախապատվություն: Իրավունքի սկզբունքների կոնֆլիկտի լուծումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից, տվյալ ժամանակաշրջանում և տվյալ սոցիումում գերակայող բարոյական և փիլիսոփայա-



կան գաղափարախոսությունից:

Իրավունքի սկզբունքների կոնֆլիկտի լուծումը պահանջում է նույնչափ ոսկերչական աշխատանք, որքան իրավունքի սկզբունքից բացառություն կատարելը: Մրցակցող իրավական արժեքների միջև ճիշտ ընտրություն կատարելու համար դատավորը պետք է ունենա մասշտաբային և մետաֆիզիկական մտածողություն, նա պետք է տիրապետի իրավական արժեքների վերաբերյալ սոցիալական միջավայրում առկա տրամադրություններին, կանխատեսի մրցակցող իրավական սկզբունքներից որևէ մեկին նախապատվություն տալու հնարավոր սոցիալ-իրավական հետևանքները: Պատահական չէ, որ մրցակցող իրավունքի սկզբունքների ընտրությանը վերաբերող իրավական վեճերը, որպես կանոն, լուծվում են ոչ թե ընդհանուր իրավասության դատարաններում, այլ սահմանադրական և միջազգային դատարաններում, որտեղ գերակայում է իրավունքի փիլիսոփայության մթնոլորտը:

**3.2. Մարդու իրավունքների կոնֆլիկտները**

**3.2.1. Մարդու իրավունքների կոնֆլիկտները (պարունահրավակական տեսանկյունը)**

**(ա) Ընդհանուր դրույթներ:** «Մարդու իրավունքների կոնֆլիկտ» հասկացությունը օգտագործվում է ժամանակակից եվրոպական գրականության մեջ, մինչդեռ հռոմեական իրավունքում և նախահեղափոխական ռուսական աղբյուրներում առավելապես օգտագործվում էր «իրավունքների կոլիզիա» հասկացությունը: Ժամանակակից առանձին ռուս հեղինակներ գործածում են «մարդու իրավունքների մրցակցություն» ձևակերպումը<sup>16</sup>:

Արդեն նշել ենք, որ մարդու իրավունքների կոնֆլիկտը և դրանց լուծման կանոններն իրավական նորմերի կոլիզիաներից տարանջատելու նպատակով կօգտագործվի «մարդու իրավունքների

կոնֆլիկտ» հասկացությունը:

**(բ) Մարդու մասնավոր իրավունքների կոնֆլիկտը հռոմեական իրավունքում:** Հռոմեական իրավունքում նշվում էր, որ առանձին իրավունքների իրականացումը լրիվ կամ մասնակի խոչընդոտում է այլ իրավունքների իրականացմանը: Այդպիսի դեպքերը անվանում են իրավունքի կոլիզիաներ: Այդ կոնֆլիկտները լուծվում էին կախված նրանից, թե տարբեր իրավիճակներում օրենքով նախատեսված իրավունքները ինչպես են հարաբերակցվում: Այսպես՝ միևնույն առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի և այլ անմիջական իրավունքների (սերվիտուտ, կառուցապատման իրավունք) միջև կոլիզիաների դեպքում վերջիններս անխոչընդոտ իրականացվում են՝ սահմանափակելով սեփականատիրոջ իրավունքները, իսկ այն դարձնելով «nudum ius» (բառացի նշանակում է՝ մերկ իրավունք, այսինքն՝ իրավունք առանց իրականացնելու հնարավորության) աստիճանի: Մեկ այլ կանոն, եթե իրավունքները հավասարազոր էին և միմյանց հետ փոխկապված չէին, ապա այդ դեպքերում, կոլիզիան լուծվում էր պրևենցիայի սկզբունքով, այսինքն՝ նախապատվություն էր ստանում նա, ով ավելի վաղ էր իրականացրել իրավունքը<sup>17</sup>:

**(գ) Մարդու մասնավոր իրավունքների կոնֆլիկտը նախահեղափոխական ռուսական իրավունքում:** Մուբյեկտիվ մասնավոր իրավունքների կոնֆլիկտներին առավել ամբողջական անդրադարձել է նախահեղափոխական շրջանի իրավաբան Ե. Վասկովսկին: Ընդ որում՝ նա նույնպես օգտագործում էր «մարդու իրավունքների կոլիզիա» և «մարդու իրավունքների զուգադիպություն» հասկացությունները: Հեղինակը նշում էր. «Իրավունքներն իրականացնելիս ոչ հազվադեպ նրանք զուգադիպում են միմյանց, քանի որ մեկ անձին միաժամանակ պատկանում են մի քանի իրավունքներ, կամ միևնույն առարկան հանդիսանում է տարբեր մարդկանց իրավունքների



առարկան: Եթե մի իրավունքը չի խոչընդոտում մեկ այլ իրավունքի իրականացմանը, ապա նրանց գուգադիպումը որևէ կարևորություն չունի: Այն պահից, երբ այդ իրավունքները սկսում են խոչընդոտել միմյանց, ապա իրավունքների գուգադիպումը վերաճում է բախման կամ իրավունքների կոլիզիայի: Նման դեպքում պետք է որոշել, թե այդ իրավունքներից որին տալ նախապատվություն: Տեսությունը նման իրավիճակների համար մշակել է հետևյալ կանոնները:

1) Արտոնյալ իրավունքները նախապատվություն ունեն հասարակ իրավունքների նկատմամբ (privilegium fortius vincit debilius), օրինակ՝ մրցույթի դեպքում գանձապետարանի կամ եկեղեցու իրավունքները նախապատվություն ունեն մասնավոր անձի իրավունքների նկատմամբ:

2) Ով փաստացի ավելի վաղ է իրականացրել իր իրավունքները, ապա նա պարտավոր չէ ուշադրություն դարձնել այլ անձանց իրավունքներին: Այսպես՝ եթե պարտապանն այլ վարկատուների պահանջների հիման վրա դարձել է անվճարունակ, ապա ըստ պարտավորության՝ արդեն իսկ բավարարում ստացած անձը պարտավոր չէ վերադարձնել գումարը:

3) Բախվող իրավունքների հավասարության դեպքում, նախապատվություն տրվում է ավելի վաղ ծագած իրավունքին (qui prior est tempore, potior est jure)<sup>18</sup>:

4) Անորոշության դեպքում նախապատվություն է տրվում այն անձին, որը օժտված է իր իրավունքն իրականացնելու փաստացի հնարավորությամբ (in pari causa potior causa possidentis): Օրինակ՝ նա ով հասարակական բաղնիքում առավել շուտ է սենյակ զբաղեցրել, պարտավոր չէ ներս թողնել կրկին վերադարձած այցելուին, թեև նրանք երկուսն էլ ունեն հասարակական բաղնիքի տոմսի հիման վրա ձեռք բերված միանման իրավունք:

5) Եթե այս կամ այն իրավունքին նախապատվություն տալու վերը նշված

հիմքերը բացակայում են, ապա պետք է թույլատրել բոլորի իրավունքների հավասարաչափ մասնակի իրականացում: Օրինակ՝ մրցույթային վարույթների դեպքում երբեմն կիրառվում է վարկատուների պահանջների համամասնական բավարարումը:

6) Եթե իրավունքների մասնակի իրականացումը հնարավոր չէ, ապա միայն մնում է հարցը լուծել վիճակահանությամբ: Այսպիսի եղանակ մեր (ռուսական՝ հեղ.) իրավունքին հայտնի չէ<sup>19</sup>:

Մարդու մասնավոր իրավունքների կոնֆլիկտի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել նաև 19-րդ դարի գերմանացի տեսաբան Ֆ. Ռեգելսբերգերը<sup>20</sup>:

Ն. Կորկունովն իրավունքի ընդհանուր տեսության դասագրքի՝ «Իրավական նորմերի բովանդակությունը» վերտառությամբ պարագրաֆում ներկայացրել է շահերի բախումների մասին: Նա շահերի տարաբնույթ բախումները դասակարգել է երեք խմբի՝ 1) տարբեր մարդկանց միանման շահերի բախում (օրինակ՝ միևնույն գույքի նկատմամբ տարբեր մարդկանց օգտագործման իրավունքը), 2) ոչ միանման, բայց հավասարաթեք շահերի բախում (օրինակ՝ մեծամասնության և փոքրամասնության շահը<sup>21</sup>, հին և նոր շահը), 3) ոչ հավասարաթեք շահերի բախում (օրինակ՝ պետության և համայնքի շահերը, մոր և պտղի շահը)<sup>22</sup>: Շահերի բախման վերաբերյալ Ն. Կորկունովն արտահայտել է մի շարք դատողություններ, որոնք արդիական են նաև ներկայումս:

Առաջին՝ շահերի բախումները քննարկելիս հեղինակը տարանջատել է համատեղելի և ոչ համատեղելի շահերը: Օրինակ՝ տարբեր մարդկանց միանման շահերի բախման (շահերի առաջին խումբը) հարցերը քննարկելիս նա նշում էր. «Եթե այս շահերի իրականացումը համատեղելի է, ապա նրանց տարանջատումը կարելի է սահմանել լրիվ հավասարության սկզբունքով: Յուրաքանչյուրի իրականա-

ցումը հնարավոր է լրիվ ծավալով: Եթե բախվող շահերի իրականացումն անհամատեղելի է այնպես, որ կարող է իրականացվել նրանցից միայն մեկը, ապա, երկու միանման շահերից որևէ մեկն ընտրելու այլ ողջամիտ հիմքերի բացակայության դեպքում, որոշում պետք է կայացվի ըստ գործի: Օրինակ՝ օգտագործման իրավունքը «qui prior tempore, potior est jure» կանոնի հիման վրա տրամադրվում է առաջին ձեռք բերողին: Երբեմն հարցը լուծվում է վիճակահանությանը»<sup>23</sup>:

Երկրորդ՝ ոչ միանման, սակայն հավասարաբեք շահերը (երկրորդ խումբը), եթե համատեղելի են, ապա, ինչպես որ միանման շահերը (առաջին խումբը), դրանք գույակցվում են հավասարության սկզբունքով, սակայն այս դեպքում հավասարությունն ունի այլ բնույթ: Ըստ հեղինակի՝ միանման շահերի տարանջատման դեպքում կիրառվում է պարզ հավասարությունը, այսինքն՝ թվաբանական հավասարությունը (յուրաքանչյուր շահի տրամադրվում է միանման քանակության ուժ), իսկ հավասարաբեք, սակայն տարբեր շահերի դեպքում կիրառվում է համաչափության սկզբունքը, այսինքն՝ երկրաչափական հավասարությունը: Տարբերվող շահերը իրենց գոյության համար պահանջում են տարբեր քանակի ուժ, ուստի այդ շահերի հավասարությունը կլինեն խաբկանք, եթե շատ ուժ պահանջող շահին տրամադրվեր նույնքան ուժ, որքան մյուսինն է, որը պահանջում էր համեմատաբար ավելի քիչ ուժ: Այս պայմաններում մի շահը իր իրականացման համար կստանա ավելի մեծ քանակի ուժ, քան պետք է, իսկ մյուս շահը կստանա անբավարար քանակի ուժ: Նման դեպքերում կիրառվում է համամասնական հավասարությունը, այսինքն՝ ուժերը բաշխվում են ոչ թե հավասար, այլ համամասնական քանակով<sup>24</sup>:

Տեսության մեջ առանձնացվում է մասնավոր իրավունքների կոնֆլիկտի լուծման ևս մեկ սկզբունք: Այսպես՝ նա ով իրավունքի իրականացումից օգուտ

(շահ) է փնտրում, պետք է զիջի նրան, ով ձգտում է խուսափել գուտ իրավունքի իրականացման վնասներից: Այդ պատճառով անվճարունակ պարտապանից՝ որպես նվիրատվություն գույք ստանալու իրավունք ունեցող անձի պահանջը կարող է չբավարարվել, սակայն բավարարում կարող է ստանալ նա, ում անվճարունակ պարտապանը չի վճարել փոխառության գումարը<sup>25</sup>:

**(դ) Մարդու մասնավոր իրավունքների կոնֆլիկտը խորհրդային իրավունքում:** Խորհրդային ժամանակաշրջանում մարդու իրավունքների կոնֆլիկտները և դրանց լուծման հարցերը թեև հատուկ ուսումնասիրության չեն արժանացել, սակայն առանձին հեղինակներ դրանք քննարկել են: Սույն հարցի վերաբերյալ Յա. Մագազիները, դեռևս 1920-ական թվականներին արտահայտել է մի շարք սկզբունքային դատողություններ:

Նախ՝ հեղինակը տարանջատում էր իրավունքների կոլիզիաների մի քանի տեսակներ՝ տարբեր ուժ ունեցող իրավունքների կոլիզիա (ուժեղ և թույլ իրավունքների կոլիզիա), միատեսակ և տարաբնույթ իրավունքների միջև կոլիզիա: Այսպես՝ ըստ հեղինակի կոլիզիա կարող է առաջանալ ոչ միայն միևնույն, այլ տարբեր ուժ ունեցող իրավունքների միջև, որի դեպքում ավելի ուժեղ իրավունքը ստիպում է թույլ իրավունքին նահանջել: Օրինակ՝ պարզ պարտավորություններից, որոնք օրենքով հատուկ պաշտպանված չեն, և գրավով ապահովված պարտավորություններից բխող իրավունքների կոլիզիայի դեպքում առավել ուժեղ է համարվում գրավառուի իրավունքը:

Նա նշում էր, որ կոլիզիա հնարավոր է ոչ միայն միատեսակ, այլև տարաբնույթ իրավունքների միջև: Միատեսակ իրավունքները բախման օրինակ է, երբ անձը իր գույքը վաճառել է մի քանի անձի, որի դեպքում միմյանց հետ բախվում են միևնույն գույքի նկատմամբ մի քանի միատեսակ իրավունքներ: Այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք



ձեռք է բերում այն գնորդը, ում հետ ավելի վաղ է կնքվել պայմանագիրը (ավագության սկզբունք): Կարող են բախվել նաև տարաբնույթ իրավունքները: Կոլիզիա չի ծագում միևնույն գույքի նկատմամբ այնպիսի տարաբնույթ իրավունքների միջև ինչպիսիք են, օրինակ՝ սեփականության և օգտագործման իրավունքները. ես իրավունք ունեմ օգտագործել գիրքը, իսկ գրադարանը՝ գրքի նկատմամբ ունի սեփականության իրավունք, այստեղ կոլիզիա չկա: Տարաբնույթ իրավունքները կարող են հակասել, օրինակ՝ երեխային դաստիարակելու հոր իրավունքը կարող է բախվել այն դպրոցի նույնաբնույթ իրավունքի հետ, որտեղ սովորում է երեխան,<sup>26</sup>:

Երկրորդ՝ կարևոր է այն, որ հեղինակը քննարկում է ոչ միայն անձանց մասնավոր իրավունքների, այլև պետության հանրային իրավունքի կոնֆլիկտները: Նա նշում է. «Իրավունքի կոլիզիաներ կարելի է գտնել ոչ միայն մասնավոր իրավունքում, այլև հանրային իրավունքում: Այստեղ հիմնական սկզբունքը մեզ բոլորիս հայտնի՝ պետության հանրային իրավունքների նախապատվությունն է մասնավոր անձանց իրավունքների նկատմամբ, այսինքն՝ հանրային շահի գերակայության գաղափարը: Հիմնադիր իշխանության գերակայությունն այլ իշխանությունների նկատմամբ դրսևորվում է նրանում, որ նրա և այլ իշխանության կոլիզիայի դեպքում, հիմնադիր իշխանության ակտերը ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ ... »<sup>27</sup>: Ընդ որում՝ նա նշում է. «Ոչ միայն հիմնադիր իշխանությունը, այլև պետության մյուս հանրային իրավունքները բարձր են առանձին անհատի իրավունքներից: Օրինակ, երբ բախվում են դաշտի նկատմամբ անձի մասնավոր իրավունքը և երկրի ռազմական պաշտպանության պետության իրավունքը, սպա, ըստ անհրաժեշտության, դաշտը կարող է ամայացվել (թեկուզ հետագայում հատուցելով վնասները): Նույն կերպ, երբ պետության պաշտպանության համար անհրաժեշտ են զինծա-

ռայողներ, պետությունը հավաքագրում է նրանց, ինչքան էլ որ դրա հետևանքով մասնավոր շահերը կարող են վնասվել»<sup>28</sup>: Առաջին հայացքից կարող է թվալ, որ Յա. Մագազինները, զուտ ելնելով խորհրդային ժամանակաշրջանի արժեքային համակարգից, մասնավոր շահի նկատմամբ պետական շահի առաջնությունը համարում էր ընդհանուր և անվերապահ սկզբունք, մինչդեռ իրականում դա այդպես չէ: Նա ներկայացնում է պետության հանրային իրավունքների առաջնության այնպիսի օրինակներ, որոնք նույնիսկ սահմանադրական արժեհամակարգի ներկա փոփոխության և մարդուն՝ որպես բարձրագույն արժեք հռչակելու ժամանակակից պայմաններում, կունենան նույն լուծումները:

Երրորդ՝ տվյալ ժամանակաշրջանի համար բացառիկ կարելի էր համարել այն, որ հեղինակը՝ տարանջատելով պետության հանրային և մասնավոր իրավունքները, կարծում էր, որ մասնավոր անձի հանրային և մասնավոր իրավունքների նկատմամբ նախապատվություն ունեն պետության միայն հանրային իրավունքները, բայց ոչ պետության մասնավոր իրավունքները: Նա նշում էր. «Ընդհանուր կանոնի համաձայն՝ պետության *հանրային* իրավունքներն անհատի մասնավոր և հանրային իրավունքների համեմատությամբ ունեն բարձրագույն իրավաբանական ուժ: Պետության և քաղաքացու *մասնավոր* իրավունքները, բացառությամբ առանձին դեպքերի, ունեն հավասար իրավաբանական ուժ»<sup>29</sup>:

3.2.2. Մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտը ժամանակակից իրավունքում

(ա) Ընդհանուր դրույթներ: Մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտը հատուկ նշանակություն է ձեռք բերում ժամանակակից քաղաքական խորապատկերում, քանի որ քաղաքականությունը փորձում է վերականգնել իր վերահսկողությունն այն ամենի վրա, որը





փոխանցվել էր մասնավոր անձանց: Չուկկա Լորենցոն նշում է, որ գլոբալ հարթությունում նկատելի է, թե ինչպես է աճում կրոնական քաղաքականության դերը: Մինչդեռ քաղաքական լիբերալիզմն այլևս մոդայիկ չէ: ԱՄՆ-ում շատերը կարծում են, որ հասարակական կյանքում կրոնը պետք է մեծ դերակատարություն ունենա, եթե դա տեղի ունենա, ապա լիբերալ և քաղաքական տեսանկյուններից մեկնաբանվող մարդու իրավունքների կոնֆլիկտը կդառնա առավել հավանական: Դասական օրինակ է, երբ պատմության մեջ անձի կրոնական պարտականությունը՝ հուղարկավորելու մահացած եղբորը, ակնհայտ կոնֆլիկտի մեջ էր մտնում ... քաղաքի իշխանությունների հետ, որոնք արգելում էին դավաճանների հուղարկավորությունը: Մեր օրերում կրոնն ագրեսիվ կերպով ներխուժում է բիոէթիկայի ոլորտ, քանի որ նրա տեսանկյունից ժամանակակից հասարակությունում այսպիսի հարցերը լուծելու համար բարոյական սկզբունքներն անբավարար են: Եթե լրջորեն մոտենանք հիմնական իրավունքների կոնֆլիկտին, ապա պետք է ընդունել, որ յուրաքանչյուր կոնֆլիկտ ծայրահեղ բարդ գործ է, և պետք է մանրամասն քննարկել, թե ինչպես է պետք այն լուծել: Մարդու իրավունքների որոշ կոնֆլիկտներ կարելի է լուծել փոխզիջման արդյունքում, իսկ որոշ կոնֆլիկտներ (սահմանադրական դիլեմաներ) չեն կարող լուծվել զուտ իրավական բանակալության հիման վրա<sup>30</sup>:

Ավանդաբար սահմանադրական մտածողությունը փորձում է ցույց տալ, որ կարելի է գտնել մարդու իրավունքների կոնֆլիկտի լուծման այնպիսի մոդել, որը կիրառելի է բոլոր նմանատիպ դեպքերի համար, սակայն սահմանադրական դիլեմաների (մարդու իրավունքների դիլեմայի) դեպքում հնարավոր չէ տալ միանշանակ և վերջնական լուծում: Չուկկա Լորենցոն արդարացիորեն նշում է, որ կյանքի և մահվան սահմանները և նմանատիպ այլ հարցերը կարող են մնալ

անլուծելի և հետապնդեն գալիք սերունդներին:

**Մարդու իրավունքների դիլեման (երկընտրանքը):** Արտասահմանյան գրականությունում վերջերս հաճախ են օգտագործում «սահմանադրական դիլեմա» կամ «մարդու իրավունքների դիլեմա» հասկացությունը: Այն կարելի է բնորոշել մարդու իրավունքների այնպիսի կոնֆլիկտ, որի դեպքում մի իրավունքն իրականացվում է մարդու մեկ այլ իրավունքի ոչնչացման ճանապարհով:

Միջազգային հանրային իրավունքում իրավական դիլեման բնութագրվում է որպես առնվազն երկու իրավական նորմերի միջև անխուսափելի և անուղղելի բախում, որի դեպքում մի նորմի կիրառումն անխուսափելիորեն առաջ է բերում մյուս նորմի անպատեհ խախտման<sup>31</sup>: Հեղինակը թվարկում է իրավական դիլեմայի մի շարք հատկանիշներ, որոնցից առանձնացնենք երկուսը՝ իրավական դիլեմաներն անխուսափելի և անուղղելի բախումներ են: **Անխուսափելի** բախումն առաջանում է այնպիսի իրավիճակներում, որտեղ երկու կամ ավելի հակամարտող նորմերը ստեղծվել են տարբեր ժամանակահատվածներում, ավելին՝ նորմի այդպիսի բախումն այդ պահին հնարավոր չէր կանխատեսել: Օրինակ՝ ԵՄ անդամ պետությունները, որոնք ոչ ԵՄ անդամ պետությունների հետ ստորագրել են էներգիային վերաբերող միջկառավարական համաձայնագիր, որոշակի ժամանակ առաջ, չէին կարող կանխատեսել, որ հետագայում այդ համաձայնագիրը կարող է հակասել ԵՄ իրավունքին: Այսինքն՝ հնարավոր չէ այնպիսի կարգավորում նախատեսել, որ չհակասի սպազայում ստեղծվելիք կարգավորմանը: **Անուղղելի են** այն բախումները, որոնք հնարավոր չէ լուծել միջազգային իրավունքի նորմերի բախումների կառուցակարգով: Ըստ հեղինակի՝ իրավական դիլեմաները տարբերվում են նորմերի ընդհանուր բախումից երկու տեսանկյունից: Նախ՝ իրավական դիլեմաները վերաբերում են միայն



անուղղելի և անխուսափելի բախումների: Երկրորդ՝ իրավական դիլեմաների ուսումնասիրությունը դուրս է բախվող նորմերի վերացական քննարկումից, այսինքն՝ այն փնտրում է կոնկրետ պատասխան, քե իրավական կարգն ինչպե՞ս պետք է պատասխանի առաջացած իրավական դիլեմային<sup>32</sup>:

Գրականության մեջ ընդունված է ասել, որ մարդու իրավունքների դիլեմաներն օժտված են երկու առանձնահատկությամբ՝ դրանք ունեն ողբերգականության տարր և անհամաչափելի (incommensurability) են<sup>33</sup>:

Մարդու իրավունքների դիլեմայի ողբերգականության հատկանիշն ունի բարոյաիրավական բովանդակություն: Այն շատ դեպքերում վերաճում է բարոյական երկընտրանքի: Բանն այն է, որ մարդու իրավունքների այսպիսի կոնֆլիկտի լուծման դեպքում իրավասու մարմինը կանգնում է երկու մասնավոր անձանց համար վճռական, եթե ոչ ճակատագրական նշանակություն ունեցող երկընտրանքի առաջ, և որևէ մեկի իրավունքներին նախապատվություն տալը մյուս կողմի համար ողբերգություն է, քանի որ նա գրկվում է, օրինակ՝ կյանքից, ծնող դառնալու հնարավորությունից և այլն:

Մարդու իրավունքների դիլեմայի անհամաչափելիությունը նշանակում է, որ այս դեպքում հնարավոր չէ զուգակցել կոնֆլիկտի մեջ գտնվող մարդու իրավունքները: Սաիջն Սմեաթը կարծում է, որ մարդու իրավունքների այս կոնֆլիկտների անհամաչափությունը խոչընդոտում է դիլեման հավասարակշռման մեթոդով լուծելուն<sup>34</sup>: Ջուկկա Լորենցոն նշում է, որ սահմանադրական դիլեմաների դեպքում բացակայում է գործողություններ կատարելու որևէ հստակ ուղեցույց: Դիլեմաների ժամանակ իրավաբանական հիմնավորումները ունակ չեն ներկայացնելու տվյալ գործով միակ ճիշտ լուծումը, և ամենակարևորը, որ այս դեպքերը չեն կարող լուծվել բանականության (ռաջիոնալության) եղանակով: Դա չի նշա-

նակում, որ պետք է հիասթափվել, հակառակը, պետք է փորձել խորությամբ հասկանալ խնդիրը: Միայն այդ դեպքում է հնարավոր լուծել այն, եթե նույնիսկ հնարավոր չլինի հասնել վերջնական որոշման<sup>35</sup>: Ռուս իրավաբանները նույնպես նշում են, որ մարդու իրավունքների մրցակցությունը լուծելու փորձի դեպքում մենք հարկադրված ենք բռնիք կատարելու սոցիալ-մշակութային արժեքների մետաիրավաբանական ոլորտ, որտեղ իրավակիրառ որոշումների բանական պատճառաբանություն ունենալը դժվար հասանելի գործ է<sup>36</sup>:

«Դիլեմա» հասկացությունն օգտագործում է նաև Եվրոպական դատարանը՝ Էվանսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Evans v. UK, 10.04.2007 թ.) որոշման մեջ: Նշված գործի փաստական հանգամանքների համաձայն՝ ամուսինները սերմնահեղուկը և ձվաբջիջը բեղմնավորել էին, քանի որ կնոջ մոտ ախտորոշվել էր արգանդի վզիկի քաղցկեղ և նրա ձվարանները հեռացվել էին: Այն բանից հետո, երբ ամուսիններն ամուսնալուծվել էին, կինը՝ Էվանսը, ցանկացել է ունենալ կենսաբանական երեխա, իսկ նախկին ամուսինը՝ չէր ցանկանում հայր դառնալ: Այս կոնֆլիկտը չէր կարող լուծվել առանց որևէ մեկի իրավունքը զոհաբերելու, քանի որ դրանք հավասարակշռել հնարավոր չէր: Եվրոպական դատարանի Մեծ պալատը նշել է. «Այս գործի հիմքում ընկած դիլեման այն է, որ գործը վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանող երկու մասնավոր անձանց՝ դիմողի և Եվրոպական իրավունքներին: Ավելին, այս երկու անձանց շահերն անհաշտ են, քանի որ եթե դիմողին թույլատրվի օգտագործել էմբրիոնը, ապա Ե.-ն իր կամքին հակառակ կդառնա հայր, իսկ եթե ընդունվի Եվրոպական իրավունքները, ապա Եվրոպական դատարանը կհրաժարումը, ապա դիմողը կգրկվի գենետիկ ծնող դառնալու հնարավորությունից: Այս գործի բարդ փաստական հանգամանքների դեպքում ազգային իշխանությունները ինչպիսի

որոշում էլ որ կայացնեին, այն չէր համապատասխանի կողմերից որևէ մեկի շահերին»<sup>37</sup>:

**Մարդու իրավունքների կոնֆլիկտների դասակարգումը:** Այս հարցին համակողմանի անդրադարձել է Ջուլյա Լորենցոն: Նա մարդու իրավունքների կոնֆլիկտները դասակարգում է երկու մեծ խմբի՝ իրավունքների արտաքին կոնֆլիկտներ (Inter-rights conflict) և իրավունքների ներքին կոնֆլիկտներ (Intra-rights conflict): Արտաքին և ներքին կոնֆլիկտներն իրենց հերթին կարող են լինել ամբողջական և մասնակի<sup>38</sup>: Իրավունքների կոնֆլիկտների այս դասակարգումը եվրոպական գրականության մեջ ունի լայն տարածում<sup>39</sup>:

Արտաքին կոնֆլիկտների դեպքում հակադրվում են երկու տարբերույթ իրավունքներ, օրինակ՝ կոնկրետ դեպքում հակադրվում են տեղեկություններ ստանալու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները: Ներքին կոնֆլիկտների դեպքում հակադրվում են միևնույն իրավունքները, օրինակ՝ կոնկրետ դեպքում բախվում են երկու մարդու կյանքի իրավունքները:

Արտաքին կոնֆլիկտները լինում են *ամբողջական* և *մասնակի*: Արտաքին *ամբողջական* կոնֆլիկտը սահմանադրական դիլեմայի օրինակ է: Այն չի կարող լուծվել առանց կոնֆլիկտի մեջ գտնվող իրավունքներից մեկի վերացմամբ: Այս կոնֆլիկտի օրինակ է, երբ հաճախորդի մասնավոր կյանքի իրավունքը, որը սկզբունքորեն ներառում է նաև ինքնասպանության ազատությունը, հնարավոր չէ ինքնուրույն իրականացնել (մարդը առանց օգնության, ինքնուրույն չի կարող ինքնասպանություն գործել): Արդյոք նա ունի ինքնասպանություն գործելու համար օգնություն ստանալու իրավունք: Այս դեպքում կոնֆլիկտի մեջ են մտնում մասնավոր կյանքի իրավունքը և կյանքի իրավունքը, որը ներառում է ինքնասպանությանն օժանդակելու բացարձակ արգելք: Այս իրավունքների միջև առ-

կա է ամբողջական կոնֆլիկտ, քանի որ հնարավոր չէ իրականացնել մասնավոր կյանքի իրավունքից բխող ինքնասպանության ազատությունը՝ առանց ժխտելու ինքնասպանությանն օժանդակելու բացարձակ արգելքը:

Արտաքին *մասնակի* կոնֆլիկտը, կախված գործի հանգամանքներից, կարելի է լուծել՝ առանց մյուս իրավունքի բուն էությունը ժխտելու (խեղաթյուրելու): Օրինակ՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և խոսքի ազատության իրավունքի միջև կոնֆլիկտը, մասնավորապես՝ երբ լրատվության միջոցը պետք է որոշի, թե արդյոք կարող է հրապարակել հանրային անձի վերաբերյալ որոշակի զգայուն տեղեկատվություն:

Վերջերս Եվրոպական դատարանի Մեծ պալատը քննարկել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով ամրագրված իրավունքների կոնֆլիկտի կոնկրետ դրսևորում: Այսպես՝ Մ. Լ.-ը և Վ. Վ.-ն ընդդեմ Գերմանիայի գործով (M.L. and W.W. v. Germany, 28.06.2018) գործով դիմումատուները հանրահայտ դերասանի սպանության համար դատապարտված անձինք էին: Պատիժը կրելուց հետո նրանք դիմել են նախկինում իրենց գործը լուսաբանած լրատվամիջոցներին՝ առցանց արխիվներում պահպանված՝ իրենց գործը լուսաբանող նյութերից իրենց անունները հեռացնելու խնդրանքով: Լրատվամիջոցները մերժել են դիմումատուների խնդրանքը: Մերժման դեմ դատական պաշտպանությունն ավարտվել է ի վնաս դիմումատուների: Եվրոպական դատարանի առջև դիմումատուները պաշտպանում էին Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Նշված գործով վճռում Եվրոպական դատարանն առաջին անգամ խնդիր ուներ գնահատելու, թե արդյոք ներպետական դատարանները ճիշտ են հավասարակշռել անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր-



րապես, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը և Կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված՝ նախկինում տվյալ անձի վերաբերյալ հրապարակված նյութերն առցանց պահպանելու՝ լրատվամիջոցի իրավունքը: Դատարանը նախևառաջ վերահաստատել է, որ անձնական տվյալների պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունի անձի՝ մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքից օգտվելու հարցում: Դատարանը միաժամանակ շեշտադրել է համացանցի կարևոր դերը հանրության համար նորությունների մատչելիությունն ապահովելու և տեղեկատվության տարածումը հեշտացնելու հարցում: Համացանցային արխիվների պահպանումն այդ դերի կարևոր տարրն է և այդ արխիվները պաշտպանված են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Լրատվամիջոցները բացի իրենց հիմնական գործառույթից ունեն նաև երկրորդական դեր՝ պահպանելու նախկինում հրապարակված նյութերն ու դրանք մատչելի դարձնելու հանրությանը: Եվրոպական դատարանը, գնահատելու համար, թե ճիշտ են արդյոք ներպետական դատարանները հավասարակշռել վերը նշված երկու իրավունքները, հաշվի է առել հետևյալ չափանիշները. համապատասխան հրապարակումների ներդրումը հանրային հետաքրքրություն ներկայացնող բանավեճում, տվյալ անձի վատ համբավի աստիճանը, հրապարակված նյութի թեման, տվյալ անձի նախկին վարքագիծը, տվյալ հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները: Նշված չափանիշները կիրառելով տվյալ գործի փաստերի նկատմամբ՝ դատարանը

րանը եզրահանգեց, որ ներպետական դատարանները չեն խախտել դիմումատուների՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Դատարանը, մասնավորապես, հաշվի առավ դիմումատուների վերաբերյալ սկզբնական հրապարակումների օրինական բնույթը, այդ նյութերը պահպանելու կարևորությունը և դիմումատուների վարքագիծը լրատվամիջոցների նկատմամբ:

Ներքին կոնֆլիկտները նույնպես լիմում են *ամբողջական և մասնակի*: Ներքին *ամբողջական* կոնֆլիկտները նույնպես սահմանադրական դիլեմաներ են, քանի որ նույնաբնույթ իրավունքները փոխադարձաբար և ամբողջականորեն բացառում են միմյանց: Եթե կատարվում է մի պահանջը, ապա դրանով իսկ բացառվում է մյուս պահանջի իրականացումը: Այսպիսի կոնֆլիկտի օրինակ է՝ Ջողի և Մերի սիամական երկվորյակների գործը: Բժիշկների այստորոշմամբ, Մերին քրոջ (Ջողիի) հաշվին վարում էր մակարոյժի կյանք: Ջողիի կյանքի իրավունքը հակադրվել էր Մերիի կյանքի իրավունքին: Մեկի կյանքը փրկելու համար անհրաժեշտ էր մյուսին գրկել կյանքից<sup>40</sup>, իսկ եթե որևէ միջոց չձեռնարկվեր, ապա երկուսն էլ կմահանային: Բժիշկները փաստել էին, որ Ջողիի կյանքը փրկելու համար պետք է Մերիին կյանքից գրկել: Ծնողները, կրոնական նկատառումներից ելնելով, հրաժարվել էին փրկել մի աղջկան, մյուսի կյանքի հաշվին: Այս դիլեման լուծելու համար անհրաժեշտ էր դատարանի միջամտությունը, և դատարանը որոշել էր, որ Ջողիի կյանքը փրկելու համար պետք

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)

ԴԱՏԱՎԱՆ  
Իշխանություն

	Ներքին կոնֆլիկտ	Արտաքին կոնֆլիկտ
Ամբողջական կոնֆլիկտ	Կյանքի հիմնական իրավունքը v. Կյանքի հիմնական իրավունքի	Կյանքի իրավունքը v. Մասնավոր կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու հիմնական իրավունքի
Մասնակի կոնֆլիկտ	Խոսքի ազատության հիմնական իրավունքը v. Խոսքի ազատության հիմնական իրավունքի	Խոսքի ազատության հիմնական իրավունքը v. Տեղեկատվական գաղտնիության հիմնական իրավունքի



է Սերիին գրկել կյանքից<sup>41</sup>:

Ներքին մասնակի կոնֆլիկտի օրինակ է, երբ երկու հակադիր ծայրահեղական խմբեր պահանջում են թույլատրելի նույն օրը և նույն վայրում իրականացնելու հանրային միջոցառում, որը կարող էր նրանց միջև առաջացնել կոնֆլիկտ: Իրավունքների կոնֆլիկտը կարելի է լուծել իրավաբանական դատողությունների և կարգավորումների միջոցով, օրինակ՝ թույլատրել հանրային միջոցառումներն անցկացնել տարբեր վայրերում:

### 3.2.3. Եզրահանգումներ

Հռոմեական իրավունքում մասնավոր իրավունքների միջև կոնֆլիկտներն անվանում էին իրավական կոլիզաներ, մինչդեռ եվրոպական ժամանակակից գրականության մեջ օգտագործվում է «մարդու իրավունքների կոնֆլիկտ» հասկացությունը:

Մարդու իրավունքների կոնֆլիկտն այնպիսի վիճակ է, երբ մի իրավունքի իրականացումը լրիվ կամ մասնակի բացառում կամ խոչընդոտում է մեկ այլ իրավունքի իրականացմանը:

Հռոմեական և նախահեղափոխական ռուսական իրավունքում ուսումնասիրվում էին հատկապես մարդու մասնավոր իրավունքների կոնֆլիկտները, մինչդեռ խորհրդային ժամանակաշրջանում Յա. Մազազիները քննարկում էր պետության

հանրային և մարդու մասնավոր ու հանրային իրավունքների կոնֆլիկտները, պետության մասնավոր և մարդու իրավունքների կոնֆլիկտները: Իրավունքի կոնֆլիկտների վերաբերյալ հեղինակի առաջարկած լուծումներն արժեքավոր են նաև արդի ժամանակաշրջանում, երբ գիտատեխնիկական զարգացումներին զուգընթաց ավելանում են մասնավոր անձանց իրավունքների միջև կոնֆլիկտների ոլորտները:

Յա. Մազազիները դեռևս 1920-ականներին շեշտադրում էր այն մասին, որ կոնֆլիկտներ կարող են ծագել միատեսակ և տարաբնույթ իրավունքների միջև, որը, մոտ մեկ դար անց, եվրոպական հետազոտողները (օրինակ՝ Չուկկա Լորենցոն) կանվանեն մարդու իրավունքների ներքին և արտաքին կոնֆլիկտներ:

Մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտները և դրանց լուծման ուղիները ժամանակակից իրավաբանության արդիական հարցերից է: Սահմանադրագետների առաքելությունն է համալիր հետազոտել մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտների բարդ և բազմաշերտ հարցերը, որոնց արդյունքներն իրավասու մարմիններին կօգնեն իրական կյանքում նման կոնֆլիկտների հանդիպելիս կողմնորոշվել, հարցի արդարացի և հավասարակշռված լուծումները փնտրելիս:

<sup>1</sup> Бержель Ж.Л., Общая теория права, Под общ. ред. В.И. Даниленко, Пер. с фр., М., Изд. дом NOTA BENE, 2000, с. 183.  
<sup>2</sup> Там же, с. 185.  
<sup>3</sup> Скурко Е.В., Принципы права: монография, М., Осъ - 89, 2008, с. 63.  
<sup>4</sup> Теория государства и права: учебник / Под ред. В.К. Бабаева, М., Юристъ, 2002, с. 230-231.  
<sup>5</sup> Кашанина Т.В., Структура права: монография, М., Проспект, 2015, с. 275, 281.  
<sup>6</sup> Իրավունքի սկզբունքների դասակարգման մասին տե՛ս Կարտաշով В.Н., Теория правовой системы общества: учебник, М., Изд. Юрайт, 2018, с. 86-89.

<sup>7</sup> Сорокин В.В., Психология для судей: монография, М., Юрлитинформ, 2018, с. 97.  
<sup>8</sup> Там же, с. 96.  
<sup>9</sup> Там же, с. 97.  
<sup>10</sup> Там же, с. 106.  
<sup>11</sup> Гаджиев Г.А., Конституция Российской Федерации 1993 г. с точки зрения правовой аксиологии // Юридический мир, 2013, № 12.  
<sup>12</sup> Там же.  
<sup>13</sup> Алекси Р., Понятие и действительность права (ответ юридическому позитивизму) = Robert Alexy. Begriff und Geltung des Rechts; пер. с нем. / [А. Лаптев, Ф. Кальшойер]; [В. Бергманн, пред., сост.]; [Т. Яковлева, науч. ред.], М., Инфотропик Медиа, 2011, с. 89.



- <sup>14</sup> Кокотов А.Н., Право конституции в российском праве // Актуальные проблемы российского права, 2014, №10. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 05.08.2018).
- <sup>15</sup> Грачев Н.И., Тихонов А.А., Основы конституционного строя как общеправовые принципы // Вестник ВолГУ. Серия 5: Юриспруденция, 2013, № 1. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 05.08.2018).
- <sup>16</sup> Тимошина Е.В., Краевский А.А., Салмин Д.Н., Методология судебного толкования: инструменты взвешивания в ситуации конкуренции прав человека // Вестник СПбГУ. Серия 14, Право, 2015, №3. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 29.08.2018).
- <sup>17</sup> Римское частное право: учебник для бакалавров и магистров / под ред. И.Б. Новицкого, И.С. Перетерского, М., Изд. Юрайт, 2017, с. 79-82.
- <sup>18</sup> Յս. Մագազիններն այս կանոնի կապակցությամբ նշում էր, որ այն գործում է միայն իրային իրավունքների բախման դեպքում, սակայն պարտավորական իրավունքների (օրինակ՝ պարտքի պահանջի) դեպքում այս սկզբունքը նշանակություն չունի. ըստ ժամանակի ավագությունը վարկառուին ավելի ուշ ծագած պահանջների նկատմամբ որևէ առավելություն չի տալիս:
- <sup>19</sup> Васильковский Е.В., Учебник гражданского права. Выпуск I: Введение и общая часть. СПб.: Типография Контрагентства железных дорог, 1894, с. 151-152.
- <sup>20</sup> Регельсбергеръ Ф., Общее учение о праве. Перевод И.А. Базанова, под ред. проф. Ю.С. Гамбарова. Типография И. Д. Сытина, М., 1897, с. 292-293.
- <sup>21</sup> Հեղինակը, մեծամասության և փոքրամասնության շահերը ներկայացնելով որպես հավասարաբեթ (շահերի երկրորդ խումբը), թույլ է տվել մտքերի հակասություն: Բանն այն է, որ նա ընդհանուր և մասնավոր շահերը որակում է որպես ոչ հավասարաբեթ (շահերի երրորդ խումբը): Նա նշում էր, որ պետության շահն ավելի բարձր է գնահատվում, քան համայնքի շահը, համայնքի շահն ավելի բարձր է, քան անհատի շահը: Կարծում ենք, որ ոչ հավասարաբեթ այս շահերը, ըստ էության, մեծամասության և փոքրամասնության շահերի դրսևորումներն են, որոնք հեղինակը որակել էր որպես հավասարաբեթ շահեր:
- <sup>22</sup> Коркунов Н.М., Лекции по общей теории права. Сост., автор вступ. ст., коммент. А.Н. Медушевский, М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010, с. 192-196.
- <sup>23</sup> Там же, с. 194-195.
- <sup>24</sup> Там же, с. 194-195.
- <sup>25</sup> Магазинер Я.М., Избранные труды по общей теории права. СПб.: Изд. Р. Асланова «Юридический центр Пресс», 2006, <https://law.wikireading.ru/8964>
- <sup>26</sup> Там же.
- <sup>27</sup> Там же.
- <sup>28</sup> Там же.
- <sup>29</sup> Там же.
- <sup>30</sup> Zucca Lorenzo, Conflicts of Fundamental Rights as Constitutional Dilemmas (July 2, 2008). Conflicts between fundamental rights, Eva Brems, ed., Antwerp/Oxford/Portland, 2008. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=1154528>.
- <sup>31</sup> Valentin Jeutner, Irresolvable Norm Conflicts in International Law: The Concept of a Legal Dilemma. Oxford. Oxford University Press, 2017, p. 17.
- <sup>32</sup> Valentin Jeutner, Irresolvable Norm Conflicts in International Law: The Concept of a Legal Dilemma. Oxford. Oxford University Press, 2017, p. 17-43.
- <sup>33</sup> Jacco Bomhoff and Lorenzo Zucca, ‘Evans v. UK, European Court of Human Rights— The Tragedy of Ms Evans: Conflicts and Incommensurability of Rights, Evans v. the United Kingdom, Fourth Section Judgment of 7 March 2006, Application No.6339/ 05’ (2006) 2 European Constitutional Law Review 424– 42, Stijn Smet, Conflicts between Human Rights and the ECtHR: Towards a Structured Balancing Test. When human rights clash at the European Court of human rights. Conflict or harmony? Edited by Stijn Smet and Eva Brems. Oxford University press. 2017, p. 56.
- <sup>34</sup> Stijn Smet, Conflicts between Human Rights and the ECtHR: Towards a Structured Balancing Test. When human rights clash at the European Court of human rights. Conflict or harmony? Edited by Stijn Smet and Eva Brems. Oxford University press. 2017, p. 56.
- <sup>35</sup> Zucca Lorenzo, Conflicts of Fundamental Rights as Constitutional Dilemmas (July 2, 2008). Conflicts between fundamental rights, Eva Brems, ed., Antwerp/Oxford/Portland, 2008. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=1154528>.
- <sup>36</sup> Тимошина Е.В., Краевский А.А., Салмин Д.Н. Методология судебного толкования: инструменты взвешивания в ситуации конкуренции прав человека // Вестник СПбГУ.



- Серия 14, Право, 2015, №3. URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 29.08.2018).
- <sup>37</sup> [http://europeancourt.europa.eu/uploads/ECHR\\_Evans\\_v\\_The\\_United\\_Kingdom\\_10\\_04\\_2007.pdf](http://europeancourt.europa.eu/uploads/ECHR_Evans_v_The_United_Kingdom_10_04_2007.pdf)
- <sup>38</sup> Zucca Lorenzo, Conflicts of Fundamental Rights as Constitutional Dilemmas (July 2, 2008). Conflicts between fundamental rights, Eva Brems, ed., Antwerp/Oxford/Portland, 2008. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=1154528>
- <sup>39</sup> Mikaela Carlberg Conflicts between Fundamental Rights in Europe. Lund University, 2015, p. 9-10, David Martinez-Zorrilla The Structure of Conflicts of Fundamental Legal Rights. Law and Philosophy. November 2011, Emmanuelle Bribosia, Isabelle Rorive In search of a balance between the right to equality and other fundamental rights. European Commission, 2010, p. 6.
- <sup>40</sup> Անգլերեն տեքստում օգտագործվում է «սպանել» հասկացությունը:
- <sup>41</sup> Re A (Children) (Conjoined Twins: Medical Treatment) No.1 [2000] Human Rights Law Reports, p. 721.



## RESUME - РЕЗЮМЕ

### NON-SYSTEM CONFLICTS AND INTRA-SYSTEM CONFLICTS OF PRINCIPLES OF LAW

Artur Ghambaryan

*Head of the Department of Theory and History of State and Law,  
Russian-Armenian University, Doctor of Law, Professor*

The legal norms enshrined in positive law often contradict the principles of law (human rights). In the event of such a contradiction, preference is given to the principles of law (regardless of whether directly or indirectly the principle of law is enshrined in positive law). Moreover, in the event of a contradiction between the two legal norms defining a particular behavior, preference should be given to the rule that follows from the principle of law.

The legal conflicts should be distinguished from the exceptions arising from the principles of law. The Principles of law cannot fail to have exceptions, otherwise the objective need for a differentiated legal regulation of social relations will be blocked. The establishment of exceptions to the principles of law must comply with the requirements of *certainty* and *legality*.

Within the system of legal principles, competition may arise between them. This competition is not solved by using traditional conflict-of-laws rules (*lex superior, lex specialis, etc.*), but by the method of balance (*weighing and balancing*), which does not imply the insignificance of one of the principles in conflict. The solution of the conflict between the principles of law depends on the circumstances of the particular case, the moral and philosophical ideology that has taken shape at a given time and in a given society. In order to make the right choice between competing legal values, the Judge must have a large-scale and metaphysical thinking. It is not by chance that legal disputes regarding the choice between competing legal principles are usually resolved not in the Courts of the General jurisdiction, but in Constitutional and International Courts, where the atmosphere of the philosophy of law prevails.

Taking in account that the principles of law are often identified with human rights or with the guarantees of human rights, it can be said that the conflict of human rights is a particular manifestation of conflicts of principles of law. Some human rights conflicts can be resolved through compromise, and some conflicts (constitutional dilemmas) cannot be resolved purely on the basis of legal reason. The human rights dilemma can be described as a conflict of human rights in which the right of one person is exercised by destroying the right of another person. The human rights dilemmas are endowed with two features: they have an element of *tragedy* and *incommensurability*. A sign of the tragedy of the human rights dilemma has a *moral* and *legal* content. The incommensurability of the human rights dilemma means that in this case it is impossible to combine the human rights of a person in conflict.

**Keywords:** *conflicts of law; conflicts of principles of law; exceptions to the principles of law; human rights conflicts; human rights dilemma.*

### ВНЕСИСТЕМНЫЕ КОЛЛИЗИИ И ВНУТРИСИСТЕМНЫЕ КОНФЛИКТЫ ПРИНЦИПОВ ПРАВА

Артур Гамбарян

*Завкафедрой теории и истории государства и права  
Российско-армянского университета,  
заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор*

Правовые нормы, закрепленные в позитивном праве, часто противоречат принципам права (правам человека). В случае такого противоречия предпочтение отдается принципам права (независимо от того, принцип права закреплен в позитивном праве прямо или косвенно). Более того, в случае про-





тиворечия между двумя правовыми нормами, определяющими конкретное поведение, предпочтение следует отдавать той норме, которая вытекает из принципа права.

Правовые коллизии следует отличать от исключений, вытекающих из принципов права. Принципы права не могут не иметь исключений, а иначе будет заблокирована объективная необходимость дифференцированного правового регулирования общественных отношений. Установление исключений из принципов права должно соответствовать требованиям определенности и правомерности.

Внутри системы правовых принципов между ними может возникнуть конкуренция. Эта конкуренция решается не путем использования традиционных коллизионных норм (lex superior, lex specialis и др.), а методом равновесия (weighing and balancing), что не предполагает ничтожность одного из принципов, находящихся в конфликте. Решение конфликта между принципами права зависит от обстоятельств конкретного дела, моральной и философской идеологии, сложившихся в данное время и в данном социуме. Для правильного выбора между конкурирующими правовыми ценностями судья должен обладать масштабным и метафизическим мышлением.

Не случайно, что правовые споры касательно выбора между конкурирующими правовыми принципами, как правило, разрешаются не в судах общей юрисдикции, а в конституционных и международных судах, где превалирует атмосфера философии права.

Имея в виду, что принципы права часто отождествляются с правами человека или с гарантиями прав человека, то можно сказать, что конфликт прав человека является частным проявлением конфликтов принципов права.

Некоторые конфликты прав человека возможно решить путем компромисса, а некоторые конфликты (конституционные дилеммы) не могут решаться чисто на основе правового разума. Дилемму прав человека можно охарактеризовать как такой конфликт прав человека, при котором право одного человека осуществляется путем уничтожения права другого человека. Дилеммы прав человека наделены двумя особенностями: они имеют элемент трагичности и несоизмеримы (incommensurability). Признак трагичности дилеммы прав человека имеет нравственно-правовое содержание. Несοοиζμεրիմոստ՝ դիլեմմայի բնույթն է, որը նշանակում է, որ երկու կողմնակա դրույթն ալ իրար հետ կոնֆլիկտային են և ոչ ոք չի կարող ընտրել միայն մեկը՝ չսպառնալով մյուսին վնասներ հասցնել:

**Ключевые слова:** Коллизии норм права; конфликты принципов права; исключения из принципов права; конфликты прав человека; дилемма прав человека.

**Բանալի բառեր** - իրավունքի նորմաների կոլիզիաները, օրենքի սկզբունքների կոնֆլիկտները, իրավունքի սկզբունքների բացառությունները, մարդու իրավունքի կոնֆլիկտները, մարդու իրավունքի երկրնորայինը:

**Ա. Գամբարյան** – Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, էլ. փոստ՝ artur.ghambaryan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 15.01.2019 թ., ստվել է գրախոսության՝ 08.02.2019, երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր Հ. Ստեփանյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 17.07.2019

ԱՄՅԻԱ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)